Սերգեյ Դովլաթով

Ինչ-որ մեկի մահը

-Ընկե՛ր Դովլաթով, դուք սև կոստյում ունե՞ք…
Խմբագիրը դժգոհ խոժոռում է հոնքերը: Նրա համար տհաճ է, որ այդպիսի անհեթեթ հարց է տալիս հանրապետական կուսակցական թերթի աշխատակցին: Խմբագիրը կաթնագույն, նորածնի դեմք դեմք ունի, լայն կոնքեր ու մանկական ազգանուն՝ Տուրոնոկ:
– Չէ՛,- ասում եմ:- Ջեմպր է:
– Այս պահին չէ, տա՛նը:
– Ընդհանրապես կոստյում չունեմ,- ասում եմ:
Կարող էի բացատրել, որ տուն, բնակարան, կացարան էլ չունեմ: Որ վարձով եմ ապրում Աստված գիտի որտեղ…
– Իսկ ինչպե՞ս եք գնում թատրոն:
Կարող էի ասել, որ թատրոն չեմ գնում: Բայց թերթում հենց նոր էր հայտնվել «Անօժիտը» ներկայացման իմ թատերախոսականը: Դիմա Շերի պատմածով էի գրել: Նյութը գովել էին բանավիճային սրության համար…
– Ինչևէ: Եկեք ըստ էության խոսենք,- հոգնեց խմբագիրը,- Իլվեսն է մահացել: Ստելու նողկալի սովորույթի համաձայն՝ տրտմություն ձևացրի:
– Ծանո՞թ էիք,-հարցրեց խմբագիրը:
– Չէ՛,- ասում եմ:
– Իլվեսը հեռուստատաստուդիայի տնօրենն էր: Նրա հուղարկավորությունը լուրջ միջոցառում է: Հուսամ՝ պա՞րզ է:
– Այնքանով որքանով:
– Մեր խմբագրության ներկայացուցիչը պիտի մասնակցի: Պատրաստվում էինք Շաբլինսկուն ուղարկել:

– Ճիշտ է,- ասում եմ:
– Բայց Միխայիլ Բորիսովիչը զբաղված է: Գործուղման է մեկնում Սաարեմաա կղզի: Կլենսկին հաշիվ չի. ներկայացուցչական արտաքինով մարդ է հարկավոր: Բուշը հարբեցողությամբ է զբաղված: Եվ այսպես շարունակ: Կանգ առանք ձեր թեկնածության վրա: Աղաչում եմ, չձախողեք: Պետք է հակիրճ ու ջերմ խոսք ասել: Անհրաժեշտ է, որ… Մի խոսքով, ձեզ պահեք այնպես, ասես լավ գիտեիք հանգուցյալին…
– Մի՞թե իմ արտաքինը ներկայացուցչական է:
– Դուք առնվազն բարձրահասակ եք,- ասաց Տուրոնոկը:
– Հե՛նրիխ Ֆրանցևիչ,- ասացի,- էդ ինձ հարմար չի: Միստիֆիկացիայի հոտ է փչում: Իլվեսի հետ ծանոթ չեմ եղել: Սուտ սգալ չեմ ուզում: Շաբլինսկուն ուղարկեք: Իսկ ես, ինչ որ է, կգնամ Սաարեմաա:
– Բացառված է: Դուք պրոբլեմային նյութեր չեք ստեղծում:
– Չեն հանձնարարում՝ չեմ ստեղծում:
– Գերմանացիների մասին թղթակցություն էին հանձնարարել, հրաժարվեցիք:
– Կարծում եմ, որ նրանց պետք է դուրս թողնել:
– Միամիտ մարդ եք, մեղմ ասած:
– Ինչո՞ւ: Միությունում գերմանացիները հայերից շատ են: Բայց նույնիսկ ինքնավարությունից են զրկված:
– Ախր ի՛նչ գերմանացիներ են դրանք: Գաղութաբնակների երրորդ սերունդն է: Վաղուց էստոնացի են դարձել: Լեզուն, մշակույթը, մտածողության կերպը… Զտարյուն էստոնացիներ են… Նրանց պապերն են Էստոնիայում ապրել…
– Բորյա Ռոյբլատի պապն էլ է Էստոնիայում ապրել: Հայրն էլ է Էստոնիայում ապրել: Բայց Բորյան էդպես էլ հրեա է մնացել: Եվ, ի դեպ, անգործ ման է գալիս…
– Գիտե՞ք ինչ, Դովլա՛թով, ձեզ հետ անհնար է խոսել: Շարունակ ինչ-որ երեսպաշտական հնարքներ եք բանեցնում: Ձեզ աշխատանք տվինք, ընդառաջ գնացինք: Մտածում էինք՝ կհասունանաք: Ձեզ մի քիչ լուրջ կպահեք…
– Բայց ես աշխատում եմ, գրում…
– Եվ վատ չեք գրում: Անձամբ Յուրնան վերջերս ձեր մի արտահայտությունը մեջբերեց. «…Կառուցողական գաղափարը լուծվել էր անպատասխանատու փորձարարության քառսում…»: Խոսքն ուրիշ բանի մասին է: Ձեր ապաքաղաքականության, ձեր մանկամտության… Ձեզնից միշտ կարելի է որևէ

դեմարշ սպասել… Երկու հարյուր հիսուն ռուբլի եք վաստակում: Ձեզ լավ են վերաբերվում, գնահատում են ձեր հումորը, ոճը: Հարց է ծագում՝ որտե՞ղ է հատուցումը: Ես ինչո՞ւ պիտի ժամանակ վատնեմ այս անպտուղ խոսակցությունների վրա: Թախանձագին խնդրում եմ՝ փոխարինեք Շաբլինսկուն: Նա ժամանակավորապես ձեզ է տալիս իր պիջակը: Փորձե՛ք: Այնտեղ, կախիչի վրա է…
Փորձեցի:
– Բայց դարձածալեր են, հա՛,- ասում եմ,- այ էստեղ Կարմիր դրոշի շքանշանը կսազեր…
– Վե՛րջ,- կտրեց խմբագիրը,- գնացե՛ք…

Ատում եմ գերեզմանոցային ծիսակատարությունները: Ու ոչ նրա համար, որ մեկը մահացել է: Բարեբախտաբար՝ հարազատներիս թաղել չի վիճակվել, իսկ օտարների հանդեպ անտարբեր եմ: Բայցևայնպես, ատում եմ թաղումները: Մահվան ֆոնին քո ցանկացած շարժում անբարոյական է թվում: Ատում եմ թաղումները վշտի գեղեցիկ համոզչականության համար: Օտար, կողմնակի մարդկանց արցունքների համար: Ուրախության զսպվող զգացումի համար. թէ որ ես չեմ, ուրիշն է մեռել: Սպասվող խմելու կապակցությամբ թաքուն անհանգստության համար: Հանգուցյալի հասցեին չափից դուրս հաճոյախոսություններ շռայլելու համար: (Միշտ ուզում եմ գոռալ. «Նա, այսպես թե այնպես, թքա՛ծ ունի: Ջիջողամիտ եղեք ողջերի հանդեպ: Այսինքն, իմ հանդեպ, օրինակ»):
Եվ ահա, պիտի փոխարինեմ Շաբլինսկուն: Մասնակցեմ հուղարկավորման արարողություններին, սգամ ու կեղծավորություն անեմ:
Զանգում եմ հեռուստաստուդիա.
– Ո՞վ է զբաղվում հուղարկավորությամբ:
– Ընկեր Իլվեսը:
– Ո՞վ:
– Անձամբ Իլվեսը:
Քիչ էր մնում աթոռից ընկնեի:
– Ռանդո Իլվեսը՝ հանգուցյալի որդին: Եվ կազմակերպչական հանձնաժողովը:
– Ո՞նց զանգեմ նրանց… Գրում եմ… Շնորհակալությո՛ւն:
Զանգում եմ: Պատասխանում են մերձբալթյան առոգանությամբ.

– Դուք հանգուցյալի ազգակա՞նն եք:
– Գործընկերը:
– Համագործակցում եք հեռուստատեսության հե՞տ:
– Այո:
– Ձեր ազգանունը Շաբլինսկի՞ է:
– Այո,- քիչ էր մնացել ասեի:- Շաբլինսկին գործուղման է: Ինձ հանձնարարել են փոխարինել նրան:
– Սպասում ենք: Երրորդ հարկ, տասներկու սենյակ:
– Գալիս եմ:
Տասներկուերորդ սենյակում թևկապներով մարդիկ էին հավաքվել: Ծանոթներ չկային: Շաբլինսկու՝ տիրոջ մարմնաձևերը պահպանած պիջակը նեղում ու կաշկանդում էր: Անհարմարավետ էր, ասես սատկած կետ լինեի՝ լողավազանում: Կամ ձի՝ շան բնում:
Մի պահ հապաղեցի, որ գրի առնեմ այս փոխաբերությունները:
Սեղանի մոտ նստած կինը ձայն տվեց.
– Դուք Շաբլինսկի՞ն եք: Հենց այդպիսին էլ ձեզ պատկերացնում էի:
– Նա,- ասում եմ,- գործուղման է:
– «Սովետական Էստոնիայից» Շաբլինսկին պիտի գար:
– Ինձ հանձնարարել են փոխարինել:
– Պարզ է: Ելույթի տեքստը պատրա՞ստ է:
– Տե՞քստը: Կարծում էի… զգացմունքային իմպրովիզացիա է լինելու: Պատրաստվում էի էքսպրոմտի պաս բան ասել…
– Հրաշալի է: Բայց իմպրովիզացիայի տեքստը պիտի նախապես համաձայնեցնեք:
– Կարո՞ղ եմ վաղը բերել:
– Նեղություն մի կրեք: Ահա Շաբլինսկու պատրաստած էքսպրոմտի տեքստը:
– Հրաշալի է,- ասում եմ,- շնորհակալություն:
Ծխախոտի թղթի երկու թերթ տվեցին: Կարդում եմ.
«Ընկերնե՛ր: Ինչպե՞ս եմ նախանձում Իլվեսին: Այո՛, այո՛, մի՛ զարմացեք: Բարի նախանձի զգացումն է պատում ինձ: Ինչպիսի՛ բովանդակալից կյանք: Ի՛նչ ազդեցիկ արդյունքներ: Երազողի և մարտիկի ինչպիսի՛ նախանձելի փառք…»:
Հետո գալիս էր ծառայությունների թվարկումը և ի վերջո՝ եզրափակումը.
«Քնի՛ր, Հո՛ւբերտ Իլվես: Դու հազվադեպ էիր քունդ առնում: Քնի՛ր…»:

Այդ ամենը արտաբերելու մասին խոսք անգամ չէր կարող լինել: Թղթին ինչ ասես գրում եմ: Բայց՝ բարձրաձա՛յն, մարդկանց առա՛ջ…
Դիմեցի սեղանի մոտ նստած կնոջը.
– Կուզեի որոշ բաներ ավելացնել, իմը… Մի քիչ փոփոխել… Ես այսքան զգացմունքային չեմ…
– Հարկավոր է պահպանել հիմքը: Տեքստը հաստատված է…
– Հիմքը կպահպանեմ:
– Ձեզ կենսագրական տվյալներ պետք կգան: Գրե՛ք:
Գրեցի:
– Ինքնահնար բաներ չպիտի լինեն:
– Գիտե՞ք,- ասում եմ,- ավելի լավ է ինքնահնար, քան՝ նրահնար:
– Ի՞նչ,- հարցրեց կինը:
– Լա՛վ,- ասում եմ,- ամեն ինչ կարգին կլինի…
Հիմա մի քանի խոսք Շաբլինսկու մասին: Հայրը բռնադատվել էր: Կենսաբան-պրոֆեսոր հորեղբայրը հիշատակվում է նշանավոր հուշերում: Համարյա թե միակն է, ում մասինՆադեժդա Մանդելշտամը սիրով է հիշում Միշան մեծանում էր գորշ ճամբարային ավանում: Հանրահաշիվն ու գեղագրությունը դասավանդում էին սովետական գիտության բուշլատավոր երևելիները: Նրա կենսական պատկերացումներն այդպես ձևավորվեցին: Կայուն ու խելամիտ տղա էր մեծանում: Խոսքերին չէր հավատում, վճռական էր գործում: Շատ էր կարդում: Նրա մեջ զուգորդվում էին պոեզիայի հանդեպ հետաքրքրությունն ու տեխնիկայի սերը: Դիպլոմ չունենալով՝ կոնստրուկտոր էր աշխատում: Ընդունվեց համալսարան: Դարձավ արդյունաբերության ոլորտի լրագրող: Պոեզիայի ու տեխնիկայի հիբրիդն այդուհետ նրա բնագավառն էր: Նպատակին հասնելու համար նա պատրաստ էր ամեն ինչի: Օգտվում էր բոլոր միջոցներից: Նպատակն ավելի ու ավելի մշուշոտ էր դառնում: Կյանքը վերասերվել էր միջոցների ձեռքբերման: Բարու և չարի այլընտրանքը վերածվել էր հաջողության և անհաջողության այլընտրանքի: Ակտիվ կենսագործունեությունն արգելակել էր բարոյական աճը: Երբ մեզ ծանոթացրին, արդեն տիպիկ ժուռնալիստ էր՝ իր երկվությամբ ու ցինիզմով:
Ժուռնալիստների մասին հրաշալի է ասել Ֆորդը. «Ազնիվ ժուռնալիստը միայն մի անգամ է ծախվում»: Բայցևայնպես այդ արտահայտությունը իդեալիստական եմ համարում: Ժուռնալիստիկայում կան գնման կետեր, կոմիսիոն խանութներ և

նույնիսկ հնոտիքի շուկա: Այսինքն վերավաճառքը չի դադարում:
Կա կյանքը՝ սքանչելի, տառապալից, ողբերգականությամբ լեցուն: Եվ կա աշխատանքը, որ լավ է վարձատրվում: Աշխատանք՝ ուղղված մի ուրիշ, առավել հստակ, ողբերգականությունից զերծ, ներդաշնակ աշխարհի ստեղծմանը: Թղթի՛ վրա:
Նստած է ժուռնալիստն ու գրում է. «Փոթորկածին տասնինը թիվն էր…»: Մի պահ կտրվեց ու գոռում է զահլատար կնոջը. «Գարիկ Լերները երեք տուփ լուծվող սուրճ է խոստացել…»:
Կինը խոհանոցից՝ ի պատասխան. «Ո՞նց, Լերներին դեռ չեն նստեցրե՞լ… Տարօրինակ է…»:
Բայց գրչածայրն արդեն առաջ է սահում: Ասենք. «Եվս մի գաղտնիք կորզվեց բնությունից…»: Կամ, ասենք. «Նյու Յորքում շահպրակը չի բուրում…»:
Ժուռնալիստն ունի այն ամենը, որ գեղեցկացնում է արժանավոր տղամարդու կյանքը: Անկեղծությո՞ւն: Ժուռնալիստն անկեղծորեն լռում է այն, ինչ մտածում է: Ստեղծագործությո՞ւն: Ժուռնալիստն անվերջ ստեղծագործում է՝ ցանկալին իրականություն ներկայացնելով: Սե՞ր: Ժուռնալիստը քնքշորեն սիրում է այն, ինչ արժանի չէ սիրո…
Բայց շեղվեցինք:
Հեռուստատեսությունից գնացի Մարինայի մոտ: Մի ամբողջ տարի մեր միջև ինտելեկուալ մտերմության պես մի բան էր կատարվում: Թշնամանքի ու անառակության երանգով:
Մարինան աշխատում էր մեր թերթի քարտուղարությունում: Աշխատանքից առաջ ու հետո նրան տիրում էին երեսնամյա չամուսնացած կնոջ հոռետեսությունն ու կոպտավուն շիտակությունը:
Մի ժամանակ Շաբլինսկու ընկերուհին էր եղել: Ինչպես և մեր խմբագրության մյուս աշխատակցուհիները: Ներառյալ՝ խլականջ կուսաշխատակից Սուդակովան, որը խպիպ ուներ: Միշան Սուդակովայի մասին ասում էր.
– Նրա վիզը իմ մեջ սեքսուալ բողոք է արթնացնում:
Բայցևայնպես ամսից ավելի խառնակվեց հետը:
Մեր բոլոր կանայք, առանց բացառության, վաղ թե ուշ զիջում էին նրա սիրահետումներին: Այդպիսի հաջողության գաղտնիքը երկար ժամանակ ինձ անհասկանալի էր մնում: Հետո հասկացա՝ բանն ինչ է: Շաբլինսկին խոցում էր դարպասումների միանշանակությամբ: Լիտվայից եկած պրակտիկանտուհուն,

օրինակ, ում հետ նոր-նոր էր ծանոթացել, հայտարարում էր.
– Ես ձեզ այնպես եմ սիրում, որ նույնիսկ ծախսերն ինձ չեն կանգնեցնի:
Մի անգամ նրան ասում եմ.
– Մի՛շկա, ես սուրբ չեմ: Բայց դու չորս տիրուհի ունես: Շուտով Նոր տարի է: Հո չորսին էլ չե՞ս կարող հրավիրել:
– Ո՞ւր հրավիրեմ,- հարցրեց Շաբլինսկին:
– Ասենք՝ ռեստորան: Կամ երեկույթի:
– Ինչի՞ չեմ կարող:
– Որովհետև սկանդալ կլինի:
– Բացառված չէ,- մտքի մեջ ընկավ նա:
– Եվ ի՞նչ:
Շաբլինսկին մտածեց, հառաչեց ու ասաց.
– Թե իմանայի՛ր՝ ինչ բարդ խնդիր է…
Մարինայից բաժանվել էր, որովհետև որոշել էր ամուսնանալ: Մարինան կնոջ դերում պիտանի չէր: Մոտ երեսուն տարեկան էր, կրկնում եմ, ծխող, չափազանց շատ բան գիտեր: Միշային հետաքրքրում էր ավանդական հրեական ամուսնության տարբերակը: Մաքուր աղջիկ՝ տնական հակումներով: Ինչ-որ մեկը ծանոթացրեց: Իսկապես՝ անուշիկ Ռոզոչկան, բեղիկներով: Ընթերցասեր է, խելքը տեղը: Հայրիկն առևտրի մեջ է…
Ռոզան աչքերը ճպճպացնելով կրկնում էր.
– Վա՛յ, ոնց ամուսնանամ: Ախր փորձ չունեմ…
– Որձ չունե՞ս,- քրքջում էր Շաբլինսկին:
Իսկ Մարինային լքեց: Եվ այստեղ հայտնվեցի ես: Խոհուն, բարեկիրթ, ազնիվ: Եվ նա ինձ կարծես առաջին անգամ տեսավ: Առաջին անգամ գնահատեց:
Իմ առաքինությունները մի ուշագրավ հատկություն ունեն: Ծաղկում ու տեսանելի են դառնում միայն որևէ այլանդակության ֆոնին: Ահա և ինձ սիրում են լքված տիկնայք:
Սկզբում ժամերով Շաբլինսկու մասին էր խոսում.
– Գիտե՞ս, նա ախր ինձ յուրովի էր սիրում: Մի անգամ հանդիմանեցի. «Չե՛ս սիրում»: Ի՞նչ ես կարծում՝ ի՞նչ արեց: Վերցրեց շորս, պայուսակս ու կախեց…
– Ինչի՞ց,- հարցնում եմ:
– Աստվա՛ծ իմ… Գիշեր էր: Բացարձակ ինտիմ: Ես ասում եմ «Չես սիրում»: Իսկ նա վերցրեց շորս, պայուսակս ու կախեց: Էն բանից: Որ ապացուցի՝ ինչքան

ուժեղ է: Ու ինձ ինչքան է սիրում…
Եվ այսպես, հեռուստատեսությունից գնում եմ Մարինայի մոտ: Նրանց շենքը նորակառույցների շրջանում է, բնակեցված գործընկեր ժուռնալիստներով: Իջնում ես տրոլեյբուսից՝ պարապուտ է, հսկա շենքը ու ամեն պատուհանում՝ ծառայակից:
Բարձրացա չորրորդ հարկ, զանգը տալիս եմ: Եվ այստեղ հիշում եմ, որ հագիս Շաբլինսկու պիջակն է: Դուռը բացվեց: Մարինան զարմացած ինձ է նայում: Կարող է մտածում է՝ խանդից մորթել եմ Շաբլինսկուն ու գողացել նրա ապրանքը…
Կանայք հագուստի հարցում գերբնական հիշողություն ունեն: Կինս մի անգամ ինչ-որ մեկի մասին ասաց. «Դու, ախր, նրան ճանաչում ես: Լա՛վ ես ճանաչում: Անախորժ մարդ է, դարչնագույն քուղերով սև կոշիկներ է հագնում»:
Լավ մարդը միշտ դժվար է շփվում կանանց հետ: Իսկ ես լավ մարդ եմ: Հայտարարում եմ առանց անհարմար զգալու, որովհետև ի՛նչ մի հպարտանալու բան է: Լավ մարդուց համապատասխան վարք են ակնկալում: Բարձր պահանջներ են ներկայացնում: Նա քարշ է տալիս վեհանձնության, խելքի, ջանասիրության, խղճի, հումորի ամենօրյա տառապալից բեռը: Իսկ հետո լքում են հանուն ինչ-որ վերջացած տականքի: Եվ այդ տականքին ծիծաղելով պատմում լավ մարդու առաքինությունների մասին:
Կանայք իսկապես միայն սրիկաներին են սիրում, դա բոլո՛ր գիտեն: Բայց ամեն ոք չի կարող սրիկա լինել: Մի ծանոթ վալյուտչիկ ունեի՝ Ակուլան: Բահի կոթով էր կնոջը ծեծում: Նրա շամպունը նվիրեց սիրուհուն: Կատվին սպանեց: Կյանքում մի անգամ կնոջ համար լյարդութոքի երշիկով բուտերբրոդ էր պատրաստել: Կինն ամբողջ գիշեր լաց էր լինում խանդաղատանքից: Ինը տարի նրան պահածո էր ուղարկում Մորդովիա: Սպասում էր…
Իսկ լավ մա՞ղը, ո՞ւմ է պետք՝ հարց է ծագում…
– Ի՞նչ է պատահել,- ասում է Մարինան՝ այդ զգեստափոխման մեջ տեսնելով ինչ-որ սեռական անարգանք: Զգացումների ինչ-որ վիրավորական ու արատավոր փոխարինելիություն…
– Միշկայի պիջակն է,- ասում եմ,- ժամանակավոր, որ պատկառելի երևամ:
– Ուզում ես ինձ առաջարկությո՞ւն անել: (Մաղձոտ հումոր):
– Լուրջ մարդ լինեի՝ հաստա՛տ:
– Մի՛ վախեցի:

– Թաղման ժամանակ պիտի ելույթ ունենամ: Իլվեսն է մահացել: Ճանաչո՞ւմ էիր:
– Իլվե՞սը: Հեռուստատեսությունի՞ց: Սարսափելի՛ է… Հաց կերե՞լ ես:
– Չեմ հիշում: Իլվեսին տեսած չկամ:
– Արգանակ ունեմ՝ կարկանդակով, ու բադ:
– Բե՛ր: Գնա՞մ խանութ:
– Ունեմ: Տակը մնացել է…
Գիտե՛մ էս բարեկիրթ տները: Սրբապատկերներ, ինքնաեռներ, զանազան Նեֆերտիտիներ… Ինչ-որ բազմանշանակ խեցիներ… Լիքը գիրք ու բոլորն էլ՝ նոփ-նոր… Իսկ օրի՝ տակը մնացե՞լ է: Միշտ տա՛կը: Ո՞ն ց են էդ մակարդակին պահում: Ու՝ որտեղի՞ց: Ո՞վ է բերել: Լրիվ չի՞ խմել: Ավելի կարևոր գործո՞վ է զբաղվել:
Խանդելու իրավունք չունեմ: Կի՛ն, ալիմենտնե՛ր… Երկար պատմություն է… Կոմպոզիցիան կփլվի…
– Օրին որտեղի՞ց,- հարցնում եմ:- Ո՞վ է եղել էստեղ:
Չեմ խանդում, իմ համար մեկ է: Համարյա մեկ է: Ուղղակի էդպիսի խաղ ենք հորինել:
– Էդիկն էր եկել: Դեպրեսիայի մեջ է:
Նկատի ունի պոետ Բոգատիրյովին: Ձգձգված ազգանուն, ակնոց, խելագար քրքիջ: Տեսել եմ նրա բանաստեղծությունների գիրքը: «Բարու ներքնաձի՞գ» էր, թե՞ «Սրտի կիսորդ»: Էդ կարգի մի բան: Սպիտակ ոտանավոր: Գուցե և սխալվում եմ: Օրինակ, այսպիսի.

Մենք քայլում էինք կողք կողքի՝ ինչպես երկու արցունք,
Ու չէինք կարողանում միանալ…

Իսկ հետո նշվում էր. «Գիշեր, 21-22 դեկտեմբերի: Լենինգրադ-Տալլին ճեպընթաց»:
– Նա միշտ դեպրեսիայի մեջ է: Աշխատանքային վիճակ: Իսկ Բուշի աշխատանքային վիճակը խումհարն է…
– Չար մի՛ լինի:
– Լա՛վ…
– Ուզո՞ւմ ես նայես օրագրիս մեջ ինչ եմ գրել: Քո վերաբերյալ:
Մարինան բերեց բալագույն նոթատետրը: Կազմին ոսկետառ գրված էր.

«Տալլինի կուսակցական կոնֆերանսի պատվիրակին»:
– Էս մի կարդա: Էս էլ մի կարդա: Ա՛յ էս:
«Նա մարմնիս տոնն էր ու հոգուս հյուրը: Գիշեր, 19-20 օգոստոսի, 1975 թիվ»:
Կարդացի ու սարսռացի: Սենյակը լցվեց անտանելի տապով: Երկնագույն պատերը թեք սողացին վեր: Աչքիս առաջ պատկերներ լողացին: Հեղձուկի նոպան ինձ դռնից դուրս շպրտեց: Շրշոցով քսվելով պաստառներին՝ սուրացի լոգարան: Ձեռքերով հենվելով սառը հախճապակու եզրերին՝ կռացա լվացարանի վրա: Հետ տվի: Գլուխս խոթեցի ծորակի տակ: Սառցասառը ջուրը ծորաց մեջքիս:
Մարինան նրբանկատորեն սպասում էր միջանցքում: Հետո հարցրեց.
– Երեկ խմե՞լ ես:
– Վա՜խ, հանգիստ թող…
– Նայում ես՝ լացդ գալիս է, կործանվում է մարդը:
– Գիտե՞ս ինչ,- ասում եմ,- պարտվելը մեր պայմաններում գուցե ավելի արժանապատիվ է, քան հաղթելը:
– Դուրդ գալիս է քեզ պակասավոր զգալը: Հիանում ես քո անհաջողություններով, ցուցամոլություն ես անում…
– Լիմոն ունե՞ս:
– Հիմա կբերեմ:
Նստել՝ լիմոն եմ ծամում: Դեմքիս արտահայտությունը՝ համապատասխան: Իսկ Մարինան իրենն է պնդում.
– Ճշմարիտ տաղանդը երբևէ ճանապարհ կհարթի իր համար: Վաղ թե ուշ կկայանա: Գրի՛, աշխատի՛ր, Ձգտի՛ր…
– Ձգտում եմ: Ու կարծես արդեն հասել եմ: Կենտկոմի մշակույթի գծով հրահանգիչը շշպոեց: Լսի՛, բա ո՞ւր է էդ… Ասում էիր՝ տակը կա…
Մարինան ինչ-որ անհեթեթություն բերեց, արտասահմանյան շշով, երկու գավաթ: Միացրեց նվագարկիչը: Բնական է՝ Վիվալդի: Վաղուց արդեն զուգորդվում է խմելուն…
– Գիտե՞ս,- ասում եմ,- վաղուց էի նորմալ պայմաններ երազում:
– Ես քեզ ուզում եմ ուժեղ, պայծառ, նպատակասլաց տեսնել:
– Դա նշանակում է նմանվել Շաբլինսկուն:
– Բոլորովի՛ն: Բնական եղիր:
– Ըստ երևույթին ինձ համար բնականը անբնական լինելն է:

– Ամեն ինչ բարդացնում ես: Օրինավոր մարդ լինելն էնքան էլ մեծ նվաճում չի:
– Գուցե փորձե՞ս:
– Կոպտելը պարտադիր չի:
Իսկապես, մտածում եմ, էս ինչ եմ անում… Գեղեցիկ կին: Հերիք է ձեռդ պարզես: Պարզեցի: Անջատեցի երաժշտությունը: Շուռ տվի գավաթը…
Լսում եմ. «Մի՛շկա, մեռա՛»: Ու հազիվ լսելի կերկերուն զնգոց. Մարինան հեռավոր, ազատ, անտեսանելի, ավելորդ ձեռքով տեղը դրեց գավաթը…
– Միշկան,- ասում եմ,- գործուղման է:
– Աստվա՛ծ իմ…
Ամեն ինչ զզվեցրել էր, ու ես հեռացա: Ավելի ճիշտ՝ մնացի:

Առավոտյան ելույթիս տեքստը պատրաստ էր.
«Ընկերնե՛ր: Տխուր հանգամանքն է մեզ բերել այստեղ: Վախճանվել է Հուբերտ Իլվեսը, ականավոր կառավարիչ, կուսակցական, պարտքի մարդ…»: Հետո գալիս էր ծառայությունների թվարկումը: Աշխատանքային գրքույկի փոքր-ինչ գեղարվեստականացված տարբերակ: Եվ վերջապես՝ եզրափակումը. «Նրա հիշատակը կապրի մեր սրտերում…»:
Թուղթը ձեռքիս գնացի հեռուստատեսություն: Այնտեղ կարդացին ու ասում են.
– Մի քիչ վերացական է: Ասենք, դա նույնիսկ ավելի լավ է: Ի հակադրություն ավելի պաշտոնական ելույթների:
Զանգեցի խմբագրություն: Ասացին.
– Հուղարկավորման հանձնաժողովի տրամադրության տակ ես: Մինչև վաղը:
Չա՛ռ:

Հուղարկավորման հանձնաժողովում իրարանցում էր խմբագրության ծանոթ մթնոլորտը հիշեցնող իրարաանցում էր՝ կեղծ մտահոգությամբ ու բարձրագոչ, տենդագին ստերջությամբ: Սանդղահարթակում, հրշեջ վահանակի մոտ ծխում էի: Այստեղ ինձ ձայն տվեց Բըկովերը: Ցանկացած խմբագրությունում այդպիսի տարօրինակ կերպար կա՝ հրեա, խելառ, խելացի: Ինչպես ուզածդ բնակավայրում՝ թաղի գիժը:
Բըկովերի ճակատագիրը բավական ուշագրավ է: Ռևելցի ֆաբրիկատիրոջ կրտսեր որդին էր: Քեմբրիջն էր ավարտել: Հետո բուրժուական Էստոնիան տապալվեց: Որպես առաջադեմ մտածողությամբ հրեա՝ Ֆիման

հեղափոխության կողմն էր: Ընդունվեց հանրապետական թերթի միջազգային բաժին: (Լեզուների իմացությունը պետք եկավ): Եվ ահա նրան պատասխանատու հանձնարարություն են տալիս: Զանգել Դիմիտրովին, Բուլղարիա: Շնորհավորանք պատվիրել Էստոնական սովետական հանրապետության հոբելյանի առթիվ: Բլոկովերը զանգեց Սոֆիա: Խոսափողը վերցրեց Դիմիտրովի քարտուղարը:
– Տալլինն է խոսում,- հայտարարեց Բլոկովերը՝ իր կարդացածությամբ հանդերձ հրեա մնալով: – Տալլինն է խոսում,- ասաց նա:
Ի պատասխան հնչեց.
– Թանկագին ընկեր Ստալին: Բուլղարիայի ազատատենչ ժողովուրդը ողջունում է ձեզ: Թույլ տվեք աշխատավորության անունից զեկուցել…
– Ես Ստալինը չեմ,- բարեհոգի ուղղեց Բլոկովերը,- ես Բլոկովերն եմ: Իսկ զանգահարում եմ այն առումով, որ լավ կլիներ մի կարճլիկ շնորհավորանք կազմակերպեիք հոբելյանի առթիվ… Տառացիորեն մի քանի բառ…
Քառասուն րոպեից Բլոկովերին ձերբակալեցին: Սրբապիղծ համադրության համար: Սրբությունն անարգելու համար: Ապուշության համար:
Դրանից հետո շատ ջրեր հոսեցին: Հետաքննություն, կարճատև ճամբար, ռազմաճակատ, որտեղ Բլոկովերը ավազով ու մոխրաջրով կովի մսեղիք էր լվանում: («Ասում էիք՝ մարամաս լվա, ես էլ մարամաս եմ լվացել»): Վերջապես նա վերադարձավ: Աշխատանքի ընդունվեց ինչ-որ գրադարանում: Դիպլոմ չուներ (Քեմբրիջը հաշիվ չի): Վճարում էին ութսուն ռուբլի: Իսկ այդ ընթացքում Բլոկովերն ամուսնացել էր: Կինը շարունակ հիվանդ էր, բայց կանոնավոր ծննդաբերում էր: Աղքատ, վախեցած, կիսախելագար՝ Բլոկովերն օրերով ցցվում էր խմբագրությունների միջանցքներում: Բացառիկ փուչ բովանդակությամբ գրոշանոց լուրեր էր գրում: ««Կալև» ֆաբրիկայի մոտ որմզդեղն են տեսել», «Պաշտոնաթող մայորի տանը ծաղկեց հսկա կակտուսը», «Տպագրվել է Գրիգորովիչի հերթական հատորը»: Եվ այսպես շարունակ: Բլոկովերն ամեն օր զանգում էր ծննդատուն՝ եռորյակներ չե՞ն ծնվել: Ամեն ամիս լայն սպառման ապրանքանու նորույթների տեսություն էր գրում: Ամեն տարի տեղեկատվություն էր պատրաստում որսի սեզոնի բացման մասին: Բոլորս նրան սիրում էինք:
– Ողջո՛ւյն, Ֆի՛մա,- ասացի ես սրբապղծորեն զվարթ ձայնով:
– Ի՜նչ դժբախտություն, ի՜նչ դժբախտություն,- պատասխանեց Բլոկովերը:
– Ասում են՝ հանգուցյալը սրիկայի մե՞կն էր:

– Էն խոսքը չի, էն խոսքը չի:
– Լսի՛, Ֆի՛մա,- ասում եմ,- գոնե մի անգամ փորձե՞լ ես մեջքդ շտկել: Խոսել ամբողջ ձայնով:
Բըկովերն այնպես նայեց, որ կարմրեցի:
– Գիտե՞ս ինչ կուզեի,- ասաց նա:- Կուզեի անտեսանելի դառնալ: Որ ընդհանրապես գոյություն չունենամ: Հաճույքով տեղս կփոխեի Իլվեսի հետ, բայց երեխաներ ունեմ: Երե՛քը: Ու ամեն մեկն իր կարիքն ունի:
– Ինչո՞ւ ես եկել:
– Չէի ուզում: Էսպես էի մտածում. ենթադրենք Բըկովերն է մահացել: Մի՞թե Իլվեսը կգար թաղելու: Երբե՛ք: Ուրեմն ես էլ չեմ գնա: Բայց կինս ասում է. «Ֆի՛մա, գնա: Բոլորը գալու են: Էնտեղ պետքական մարդիկ կլինեն…»:
– Իսկ ես պետքակա՞ն մարդ եմ:
– Էնքան էլ չէ: Բայց լավ մարդ ես:
Դուրս նայեց մի օրիորդ՝ սգո ժապավենը թևին:
– Ո՞վ է էստեղ Շաբլինսկին:
– Ես,- ասում եմ:
– Գիտե՞ք ինչ, Իլվեսը դիարանում է: Կոկիկ հագցրել են, մուգ կապույտ կոստյում: Իսկ փողկապ չի եղել: Փողկապը հենց նոր զարմիկը բերեց: Բացի այդ, դարձածալին պետք է ամրացնել Ժուռնալիստների միության կրծքանշանը…
Ես փողկապով էի: Մի տարի առաջ ֆարցովշչիկ Ակուլան էր տվել: Հենց ինքն էլ կապել էր ինչ-որ տարօրինակ եղանակով: Ա-լյա Ֆրենկ Սինատրա: Այդ օրվանից հանգույցը չեմ քանդել: Այսպես էի անում. հանգույցը թուլացնելով՝ դանդաղ լայնացնում էի օղակը: Ծայրը դուրս էր մնում: Հետո զգուշորեն հանում էի ճմռթված ականջներով գլուխս: Եվ հակառակը՝ նույն եղանակով…
– Վախենամ, որ չեմ կարողանա…
– Ես, ընդհանուր առմամբ, գիտեմ,- ասաց Բըկովերը:
– Հրաշալի է,- ուրախացավ օրիորդը,- բեռնատարը ներքևում է: Վարորդն է ու հնչյունային օպերատոր Ալտմյաէն: Ահա փողկապն ու կրծքանշանը: Հանգուցյալին տեղափոխեք այստեղ: Այդ ընթացքում արդեն ամեն ինչ պատրաստ կլինի: Արարողությունը սկսվելու է ուղիղ երեքին: Հա՛, Ալտմյաէին էլ ասեք, որ ֆոնը պիտի ցայտուն լինի: Ինքը գիտի…
Մենք հագնվեցինք, մտանք վերելակ: Բըկովերն ասաց.

– Ահա և պետք եկա:
Ներքևում կանգնած էր փակ թափքով բեռնատարը: Հնչյունային օպերատոր Ալտմյաէն ննջում էր խցիկում:
– Բարև, Օ՛սկար,- ասում եմ, – նկատի ունեցի՝ ֆոնը ցայտուն պիտի լինի:
– Ի՞նչ ֆոն,- զարմացավ Ալտմյաէն:
– Դու գիտես:
– Ի՞նչ գիտեմ:
– Օրիորդը խնդրեց, որ ասեմ…
– Ի՞նչ օրիորդ:
– Լա՛վ,- ասում եմ,- քնի՛:
Բարձրացանք թափք: Բրկովերն ուրախացել էր.
– Լավ է, որ կարող եմ օգտակար լինել: Իլվեսը պետքական մարդ է:
– Ով է պետքական մա՞րդ,- ապշեցի ես:
– Կրտսեր Իլվեսը, որդին:
– Իսկ ինչո՞վ է զբաղվում:
– Աշխատում է պրոպագանդայի բաժնում:
– Նստի,- ասում եմ,- մոտ նստի, էստեղ էնքան էլ թափ չի տալիս:
– Ինձ ամեն տեղ նույն կերպ է թափ տալիս:
Ժամանակին ճամբարային պահնորդ էի: Կալանավորներին տեղափոխում էի ճիշտ այսպիսի մետաղյա ֆուրգոններով: Մեքենան կոչվում էր ավտոզակ: Այնտեղ ընդհանուր «սալոնից» բացի նաև երկու նեղլիկ երկաթե պահարան կար: Դրանց բաժակներ էինք ասում: Ներսում, արմունկներով ու ծնկներով պատերին սեղմված, մի մարդ էր տեղավորվում: Պահակախումբը դրսից էր: Երկաթե դռան մեջ նեղ դիտանցք կար: Կալանավորներն այդ սարքն անվանում էին «Ես քեզ տեսնում եմ, դու ինձ՝ չէ»: Հանկարծ զգացի, թե ինչ անհարմար է երկաթե բաժակում գնալը: Բայց չէ՞ որ տասնվեց տարի է անցել…
Ֆուրգոնի մետաղյա տանիքին քսվելով՝ խշշացին ճյուղերը: Ճոճվեցինք. բեռնատարն արգելակեց: Դուրս եկանք: Ծառերի ետևում դեղնին էին տալիս դիահերձարանի պատերը: Դռանը, աջից, զանգի կոճակն էր: Զանգը տվեցի: Վանդականախշ գոգնոցով մի տղամարդ բացեց: Ալտմյաէն հանեց փաստաթղթերն ու ինչ-որ բան ասաց էստոներեն: Հերթապահը ձեռքի շարժումով մեզ ներս հրավիրեց:
– Ես չեմ գա,- ասաց Բրկովերը,- ուշքս կգնա:

– Ես էլ,- ասաց Ալտմյաէն,- հետո մղձավանջներ եմ տեսնելու:
– Լա՛վ եք տեղավորվել,- ասում եմ,- գլխանց պիտի զգուշացնեիք:
– Հույսս դու էիր: Մի չափսերիդ նայի՛…
– Ես փողկապ կապել էլ չգիտեմ:
– Կսովորեցնեմ,- ասաց Բըկովերը:- «Քեմբրիջյան լոտոս» կսովորեցնեմ: Էստեղ կպարապես, էնտեղ կիրագործես:
– Ես կգայի,- ասաց Ալտմյաէն,- բայց շատ տպավորվող եմ: Եվ ընդհանրապես, հանգուցյալներին չեմ սիրում: Բա դո՞ւ:
– Ուշքս գնում է նրանց համար,- ասում եմ:
– Տես ու սովորի,- ասաց Բըկովերը:- Հայելային պատկեր է: Ներդը՝ էստեղ, լայնը՝ էստեղ: Երկու անգամ շրջում ենք: Ծայրը հանեցինք: Այ էստեղ բռնում ենք ու կամաց ձգում: Տե՛ս: Սիրուն է, չէ՞:
– Ոչինչ,- ասում եմ:
– «Քեմբրիջյան լոտոսի» առավելությունն այն է, որ հեշտ է քանդվում: Հերիք է այս ծայրից ձգենք ու՝ վերջ:
– Իլվեսը շատ կուրախանա,- ասաց Ալպմյաէն:
– Հասկացա՞ր՝ ոնց է արվում:
– Կարծես թե՝ հա,- ասում եմ:
– Փորձի՛:
Բըկովերը պատրաստակամությամբ դեմ արեց թորշոմած վիզը, որին չորս տեղ սպեղանի էր կպցրած:
– Լա՛վ,- ասում եմ,- չեմ մոռանա:
Դիարանում ցուրտ էր, ու ձայները խուլ արձագանքում էին: Դարչնագույն պատեր, ցեմենտ, ՀՕՊ վահանակ, մարտականորեն կարմիր կրակմարիչ:
– Սա է,- ցույց տվեց հերթապահը:
Պատուհանի մոտ, ալ կարմիր կտավով պատած պատվանդանին դագաղն էր: Ոչ թե սովորական դարչնագույն (չհրկիզվող պահարանի գույնի), այլ՝ սև, փայլաթիթեղե եզրակարերով:
Իլվեսը կատարելապես մեռած էր թվում: Անկենդան, կաղապարվածքի պես: Փողկապը ցույց տվի հերթապահին: Պարզվեց, որ նա կարգին ռուսերեն է խոսում:
– Ես բարձրացնեմ, դուք ձգեք:
Ձեռքերը միացրած՝ նա բարձրացրեց մարմինը, ինչպես գերանն են

բարձրացնում: Հետո՝ մեր ձեռքերի թնջուկն ու իրարանցումը… «Էսպե՛ս… մի քիչ է՛լ…»: Ցցված օձիք, ճմռթված թղթե ժանյակներ…
– Օ’քեյ,- հանգուցյալի մազերը շտկելով՝ ասաց հերթապահը:
Հանեցի կրծքանշանն ու ամրացրի մուգ շեվյոտե դարձածալին: Հերթապահը բերեց վեց հեղույսներով կափարիչը: Հարմարեցրինք, ձգեցինք, պտտեցինք:
– Տղերքին կանչեմ:
Մտան Ալտմյաէն ու Բըկովերը: Ֆիման աչքերը պինդ փակել էր: Ալտմյաէն գունատ ժպտում էր: Հանեցինք դագաղն ու զգվելի ճռնչոցով հրեցինք թափքը: Ալտմյաէն նստեց խցիկում: Բըկովերն ամբողջ ճանապարհին լուռ էր: Իսկ երբ մոտենում էինք, փիլիսոփայորեն ասաց.
– Ապրեց, ապրեց մարդը ու մեռավ:
– Ուրիշ ի՞նչ էիր ուզում,- ասում եմ:

Ժողովուրդը հավաքվել էր նախասրահում: Խոսում էին շշուկով: Պատերին աչքի էին ընկնում «Մոլորակի պատանեկությունը» լուսանկարչական ցուցահանդեսի ցուցանմուշները:
Դուրս եկավ թեկապով անծանոթ մի տղամարդ ու բարձրաձայն հայտարարեց.
– Կարելի է ծխել:
Այդ փոքրիկ մարդասիրական ապօրինությունը զոհացրեց վշտացյալներին: Բազմության մեջ անաղմուկ շրջում էին կարգադրիչները: Ոչ մեկին չէի ճանաչում: Ըստ երևույթին թաղման ծիսակատարությունները խախտում են սովորական հիերարխիկ համակարգը: Անանուն մարդիկ են հայտնվում: Նրանցից, որ պատրաստ են կամավոր զբաղվել այդ գործով:
Մոտեցա կարգադրիչին.
– Դագաղը բերեցինք:
– Իսկ մալուխ վերցրի՞ք:
– Մալո՞ւխ: Առաջին անգամ եմ լսում:
– Լավ,- ասաց նա, կարծես վրիպումս աննշան լիներ: Հետո, վշտահարությունը պահպանելով՝ բարձրացրեց ձայնը:- Մեքենա նստենք, ընկերնե՛ր:
Երկու կին, ուշացած ու հապճեպ, եղևնու ճյուղեր էին փռում հատակին:
– Կարծես թե էլ պետք չենք,- ասաց Ալտմյաէն:
– Ինձ հանձնարարված է ելույթ ունենալ:
– Վերջում ես խոսելու: Սկզբում ելույթ կունենան Կենտկոմի ընկերները: Հետո

արդեն՝ ով չալարեց: Բոլոր ցանկացողները:
– Ի՞նչ է նշանակում՝ բոլոր ցանկացողները: Ինձ հանձնարարված է: Ու տեքստն էլ՝ մակագրված:
– Բնականաբար: Քեզ հանձնարարված է ցանկացող լինել: Ցուցակը տեսել եմ: Ութերորդն ես: Լեմբիտից հետո: Նա ուզում է, որ բոլորը երգեն: Էդպիսի երգ կա՝ «Կռունկներ»: «Երբեմն թվում է՝ զինվորները…»: Եվ այլն, և այլն: Եվ ահա Լեմբիտն առաջարկում է երգել ի պատիվ Իլվեսի:
– Բայց ո՞վ կերգի: Էն էլ էս ցրտին:
– Բոլորը: Այ կտեսնե՛ս:
– Դու, օրինակ, երգելո՞ւ ես:
– Չէ,- ասաց Ալտմյաէն:
– Իսկ դո՞ւ,- հարցրի Բըկովերին:
– Պետք լինի՝ կերգեմ,- պատասխանեց Ֆիման…

Ժողովուրդը շարժվեց դեպի ելքը: Շատերը ծաղկեպսակներ էին տանում, ծաղկեփնջեր ու թաղարով ծաղիկներ: Մուտքի մոտ կանգնել էր վեց ավտոբուս ու մեր ֆուրգոնը: Մոտեցավ կարգադրիչը.
– Ընկեր Շաբլինսկի՞:
– Նա գործուղման է:
– Բայց դուք «Սովետական Էստոնիայից» եք, չէ՞:
– Հա: Ինձ հանձնարարել են…
– Աճյունը դո՞ւք եք բերել:
– Մենք՝ երեքով:
– Այստեղից էլ կուղեկցեք: Կգնաք հատուկ մեքենայով: Իսկ սա՝ որ չմրսեք:
Նա ինձ մի ղլղլացող ծրար տվեց: Քողարկված հոնորար: Մի կում՝ գրոհից առաջ: Շփոթվեցի, բայց՝ անխոս: Ծրարը խցկեցի գրպանս: Պատմեցի Բըկովերին ու Ալտմյաէին: Մտանք բուֆետ, բաժակներ խնդրեցինք: Ալտմյաէն երեք բուտերբրոդ առավ: Նախասրահը դատարկվել էր: Եղևնու ճյուղերը սևին էին տալիս փայլուն դեղին հատակին: Մոտեցանք ֆուրգոնին: Վարորդն ասաց.
– Խցիկում տեղ կա:
– Ոչինչ,- ասում է Ալտմյաէն:
– «Պստիկը» տա՞նք իրան,- շշուկով հարցրի ես:
– Երբե՛ք, կյանքո՛ւմ,- կտրեց Բըկովերը:

Դագաղը նախկին տեղում էր: Որոշ ժամանակ նստել էինք կիսախավարում: Շարժիչն աշխատեց: Ալտմյաէն բուտերբրոդները դրեց դագաղի կափարիչին: Ես հանեցի խմիչքը: Ֆիման ատամներով պոկեց թիթեղյա անհովհար կափարիչը: Բաժակներն անաղմուկ զնգացին: Մեքենան շարժվեց:
– Ողորմի՛,- տխուր ասաց Բըկովերը:
Ալտմյաէն մի պահ կորցրեց իրեն ու գոչեց.
– Լա՜վ է:
Խմեցինք, շշերը խցկեցինք նստարանի տակ: Թուղթը շպրտեցինք պատուհանից:
– Բաժակները պետք է վերադարձնել,- ասում եմ:
– Դեռ պետք կգան,- նկատեց Բըկովերը:

Ֆուրգոնը ուղանցում ցնցվեց:
– Նշանակետի մոտ ենք,- ասաց Բըկովերը:
Ձայնի մեջ կյանքի ունայնության երանգներ լսվեցին:
Լիննամետսա գերեզմանատունը բլուրների վրա է, սոճիներ են այնտեղ ու մամռապատ տպավորիչ գլաքարեր: Նայելով այդ դեկորատիվ քարերին՝ լրագրողները կշտապեն ասել. «Սառցաշրջանի մնացորդներն են»: Կարծես քարացել ու լավ հիշում են նախապատմական ժամանակները:
Այստեղ ամեն ինչ համապատասխանում է անմահության և անդորրի գաղափարին: Վաղնջական ամրոցի ավերակների պես հառնել են բլուրները: Հեռվում մռնչում է անտեսանելի ծովը: Սոճիները սաղարթներն են ճոճում: Նրանց դեղնավուն համաշար բների կեղևը թեփուկոտ է:
Ոչ մի հայտարարություն, ցուցապաստառ, կրպակ ու աղբարկղ: Ջրի և քարի հանդիսավոր դաշինք: Լռությո՛ւն:
Մենք դուրս եկանք գերեզմանատան գլխավոր ծառուղին, որ հատված էր սոճիների ստվերներով: Վարորդն արգելակեց: Բացվեց երկաթյա դուռը: Մեր ետևից ավտոբուսների շարասյունն էր: Կարգադրիչը մոտեցավ.
– Քանի՞ հոգի եք:
– Երեք,- ասում եմ:
– Երեքն էլ է պետք:
Հասկացա, որ դագաղը դեռ մեր քաշելիքն է:
Ավտոբուսի մոտ խմբվել էին մարդիկ՝ ծաղկեպսակներով ու ծաղկեփնջերով: Անսպասելի դղրդաց երաժշտությունը: Առաջին հզոր ակորդն ուղեկցվեց

արձագանքով: Մեզ միացան երեք ամրակազմ տղաներ: Երիտասարդական թերթի արտահաստիքայինները: Նրանցից մեկի հետ հաճախ պինգ-պոնգ էի խաղում: Դագաղը հանեցինք: Հետո շրջվեցինք ու տեղ գրավեցինք շարասյան գլխամասում: Հնչեց Շոպենի թաղման քայլերգը: Ծանր բեռան տակ դանդաղ քայլելը տառապանք է: Հոգնել էի: Ձեռք փոխելն անհնար էր:
Բրկովերը հանկարծ խեղդված ձայնով ասաց.
– Ծա՜նր է, սողո՜ւնը…
– Արագ գնանք,- ասում եմ:
Մի քիչ արագացրինք: Նվագախումբն էլ արագացրեց: Ավելի՛ արագ: Գնում ենք: Բրկովերն ասում է.
– Հիմա կգցեմ:
Եվ՝ ավելի բարձր.
– Փոխարինեք մեզ, ընկերնե՛ր… Ալյո՜:
Նրան փոխարինեց ռադիոմեկնաբան Օյան:
Ծառուղու վերջին սևին էր տալիս ուղղանկյուն գերեզմանափոսը: Կողքին թարմ հողի բլրակն էր: Երաժիշտները շարվել էին կիսաշրջանաձև: Սպասելով դադարի՝ իջեցրինքդագաղը: Հավաքվածները շրջապատեցին գերեզմանը: Կարգադրիչն ու օգնականները հանեցին դագաղի կափարիչը: Համոզվեցի, որ փողկապը տեղում է ու քաշվեցի ծառերի տակ: Հեռուստատեսության տղերքն սկսեցին սարքավորումները տեղադրել: Լամպերի վառ լույսն անհարկի էր թվում: Խոտերի մեջ սևին էին տալիս լարերը: Մոտեցան Բրկովերն ու Ալտմյաէն: Ըստ երևույթին օղին միավորել էր մեզ: Ծխեցինք: Կարգադրիչը լռություն պահանջեց: Խոսեց առաջին հոետորը՝ վելվետե նոփ-նոր գլխարկը ձեռքին: Չէի լսում: Հետո էլի խոսողներ եղան: Լսվում էին հեռուստատեսության ջահելների առույգ փոխկանչերը:
– Ուղիղ հեռարձակում է,- ասաց Բրկովերը: Հետո ավելացրեց:- Անձամբ ինձ շան պես կթաղեն:
– Էպիդկայանը թույլ չի տա,- արձագանքեց Ալտմյաէն:- Դեպի մահ ճանապարհը սալարկված է անբովանդակ տեղեկատվությամբ:
– Լավ էլ բովանդակալից է,- բորբոքվեց Բրկովերը:
Խոսքը տվեցին «Ըխտու լեխտ» թերթի ինչ-որ պատասխանատու աշխատակցի: Մի արտահայտություն որսացի. «Նրա պապն ու հայրը պայքարել են էստոնական ինքնակալության դեմ»:

– Է՛ս ինչ էր,- ապշեց Ալտմյաէն:- Էստոնիայում ինքնակալություն չի եղել:
– Ցարիզմի դեմ, էլի՛,- ասաց Բլկովերը:
– Էստոնական ցարիզմ էլ չի եղել: Եղել է ռուսական ցարիզմ:
– Այ հրեական ցարիզմ իսկապես չի եղել,- նկատեց Ֆիման,- ինչ որ չի եղել՝ չի եղել:
Մոտեցավ կարգադրիչը:
– Դուք Շաբլինսկի՞ն եք:
– Նա գործուղման է:
– Ախ, հա՛… Պատրա՞ստ եք: Էս չէ, մյուսը դուք եք…
Ալտմյաէն ծխախոտ հանեց: Վառիչը չէր աշխատում. բենզինը վերջացել էր: Բլկովերը գնաց լուցկի բերի: Մի րոպեից հետ եկավ ոտների ծայրերին ու ձեռքերը թափահարելով՝ ասաց.
– Հիմա ծիծաղից կմեռնեք: Էս Իլվեսը չի:
Ծխախոտն ընկավ Ալտմյաէի բերանից:
– Ո՞նց թե,- հարցրի ես:
– Իլվեսը չի: Ուրիշ մարդ է: Ավելի ճիշտ՝ հանգուցյալ…
– Ֆի՛մա, հասկանո՞ւմ ես ինչ ես ասում:
– Ասում եմ քեզ՝ Իլվեսը չի: Նույնիսկ նման չի: Ի՞նչ է, Իլվեսին չե՞մ ճանաչում:
– Գուցե սադրա՞նք է,- ասաց Ալտմյաէն:
– Երևի շփոթել ես:
– Հերթապահն է շփոթել: Ես Իլվեսին տեսած չկամ: Մի բան պիտի արվի,- ասում եմ:
– Է՛լ ինչ կուզեիր,- ասաց Բլկովերը,- բա ուղիղ հեռարձակո՞ւմը:
– Բայց էս հեչ բանի նման չի:
– Գնամ նայեմ,- ասաց Ալտմյաէն:
Գնաց, վերադարձավ, ասում է.
– Իսկապես՝ Իլվեսը չի: Բայց նմանություն կա…
– Բա հարազատներն ու մերձավորնե՞րը,- հարցնում եմ:
– Իլվեսը, ճիշտը որ խոսենք, հարազատներ ու մերձավորներ չունի,- ասաց Ալտմյաէն,- անկեղծ ասած, նրան չէին սիրում:
– Բա ասում էին՝ տղա՛ն, զարմի՛կը…
– Քեզ դիր նրանց տեղը: Հեռուստահաղորդումը գնում է: Եվ ընդհանրապես՝ պատասխանատու միջոցառում…

Գերեզմանի մոտ սկսեցին երգել: Առանձնանում էր կենցաղի բաժնի Լյուբա Տորշինայի սուր դիսկանտը: Այստեղ կարգադրիչը գլխի շարժումով կանչեց ինձ: Մոտեցա գերեզմանին: Վերջապես երգեցողությունը դադարեց:
– Հրաժեշտի խոսք ունի…
Հասկանալի է՝ սխալ ասաց ազգանունս.
– Հրաժեշտի խոսք ունի ընկեր Դոլմատովը:
Ով ասես չեմ եղել կյանքում՝ է՛լ Դոկլադով, է՛լ Զապլատով…
Գնացի դեպի գերեզմանը: Փոսում ջուր էր հավաքվել ու ճերմակին էին տալիս կտրտված արմատները: Կողքին, հատուկ իշոտնուկի վրա դրված դագաղը ստվեր էր գցել: Անհայտ հանգուցյալը թաղվել էր ծաղիկների մեջ: Մի կտոր դեմք որբացած նայում էր խոլորձի ու գլադիոլուսների ճերմակ փրփուրից: Վրիպած անունով հանգուցյալն իր էր թվում: Տեսա՝ սոճիներն ինչպես են իրենց վրա կրում կապույտ վրանի գմբեթը: Ասես հեռուստաէկրանին՝ թռան-անցան արջնագռավները: Եկեղեցու կուրացուցիչ դեղին գմբեթածողը, հառնելով Մուստմյաէի տների վրա, ընդգծում էր նրանց տխուր, գորշավուն սովորականությունը: Գերեզմանը շրջապատել էին մուգ վերարկուներով անծանոթ մարդիկ: Զգացի ծաղիկների ու փշատերևի խեղդուկ հոտը: Անհարմարավետ նաշի կողերը սեղմում էին ուսերս: Թափված թերթիկները խուտուտ էին տալիս կրծքիս ծալած ձեռքերս: Գլխավերևս իրար էր անցել հեռուստաթղթակիցը: Հեռավոր, ինքնահիացման երանգով ձայն էր լսվում.

«…Ես չէի ճանաչում այս մարդուն: Նրա հոգին, մղումները, տոկունությունը, արիությունը, հիասթափություններն ու հույսերը: Չեմ հավատում, որ ճշմարտությունը նրան տրվում էր առանց որոնման: Չեմ կարծում, թե մարող հայացքը բացահայտել է խելահեղ կյանքի, տեսանելի խորամանկությունների, անհաղթանակ հաղթահանդեսների և անվիշտ պարտության սահմանաչափը: Համոզված չեմ, որ հասկացել է, թե ուր ենք գնում և որն է ուրախալին ու արժեքավորը մեր ջղաձիգ նահանջի մեջ: Բայցևայնպես, նա այստեղ է… սեփական ընտրությամբ…»:

Ուժգնացող քրթմնջոց էի լսում: Խուլ ձայնարկումներից բաղադրվում էր. «Էս ի՞նչ է խոսում…»: Մեկը քաշեց թևս: Ուսս թափ տվի: Շարունակեցի ավելի արագ. «…Ինչի՞ մասին եմ մտածում այս շիրմի առջև: Մարդկային հոգու գաղտնիքների

մասին: Մահվան ու հոգեկան վշտի հաղթահարման մասին: Կեցության օրենքների, որ ծնունդ են առել հազարամյակների խորքում և կապրեն, քանի չի մարել արեգակը…»:
Ինչ-որ մեկն ինձ հետ քաշեց:
– Չհասկացա,- ասաց Ալտմյաէն,- ի՞նչ նկատի ունեիր:
– Ես էլ չհասկացա,- ասում եմ,- շուրջս ինչ-որ քաոս է:
– Ես ամեն ինչ պարզեցի,- ասաց Բըկովերը: Դեմքը ողողվել էր գաղտնիքին թաքուն հաղորդվելու խորամանկ լույսով:- Սա ձկնորսական կոլխոզի հաշվապահն է՝ Գասպլը: Իլվեսին որպես Գասպլ հիմա թաղում են Մերիվյալյայի գերեզմանատանը: Այնտեղ ահավոր սկանդալ է: Հենց նոր զանգեցին… Ընտանիքը հիստերիայի մեջ է… Որոշվել է թաղել ինչպես որ կա…
– Երևի վաղը կամ էս իրիկուն տապանաքարերը կփոխեն,- ասաց Ալտմյաէն:
– Ոչ մի դեպքում,- առարկեց Բըկովերը:- Իլվեսը նոմենկլատուրային աշխատող է: Պիտի թաղված լինի արտոնյալ գերեզմանոցում: Անխախտ կարգ կա: Գիշերը դագաղները կփոխեն…
Ես հանկարծ կորցրի իրականության զգացումը: Բացված աշխարհում հեռանկար չկար: Ապագան լեռնացել էր թիկունքում: Ապրվածը ծածկել էր հորիզոնը: Ինձ սկսեց թվալ, որ ներդաշնակությունը բանաստեղծներն են հորինել՝ ցանկանալով հուզել մարդկանց սրտերը…
– Գնա՛նք,- ասաց Բըկովերը,- պետք է տեղ զբաղեցնել ավտոբուսում: Թե չէ ստիպված էլի երկաթե արկղն ենք մտնելու…